ՀՈԴՎԱԾՆԵՐ СТАТЬИ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԻՍՈՒՆ ՏԱՐՈՒՄ ԵՎ ՆՈՐ ՀՆԳԱՄՅԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՍՍՀ Պետպլանի նախագահ Լ. Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հետադարձ հայացք գցելով անցած հիսուն տարվա ուղու վրա, որը արդարացիորեն կոչվում է հայ ժողովրդի իսկական վերածննդի շրջան, անհրաժեշտ է անդրադառնալ մեր երկրի ոչ հեռավոր անցյալին։

Նախահեղափոխական Հայաստանը հանդիսանում էր ցարական Ռուսաստանի ամենահետամնաց ծայրամասերից մեկը։ Ռուսաստանն իսկ, իր հերթին, ինչպես նշում էր Վ. Ի. Լենինը «անհավատալի, չտեսնված հետամնաց երկիր էր, աղքատ ու կիսավայրենի, որ արտադրության գործիքներով Անգլիայից չորս անգամ, Գերմանիայից հինգ անգամ, Ամերիկայից տասն անգամ ավելի վատ էր զինված»։

Ռուսական կայսրության բաժինը համաշխարհային արդյունաբերական արտադրանքում կազմում էր 4 տոկոսից քիչ ավելի։ Այս ֆոնի վրա դժվար չէ պատկերացնել, թե տնտեսական զարգացման ինչպիսի ցածր մակարդակի վրա էր գտնվում Հայաստանը առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին։

Էկոնոմիկայի երկու հիմնական բնագավառներում գյուղատնտեսությանը բաժին էր ընկնում 84 տոկոս։ Խոշոր արդյունաբերությունը ներկայացված էր պղնձի և գինու-կոնյակի արդյունաբերությամբ։ Արդյունաբերության մնացած բնագավառները ներկայացված էին մանր կիսատնայնագործական ձեռնարկություններով։ Դրանցից էին, օրինակ, պանրագործական, պահածոյագործական, օճառի, փականագործական, բրնձամաքրման ձեռնարկությունները, մի քանի տպարաններ, գորգագործական, ոսկերչական, բրուտագործական արտադրամասեր և այլն։

Գյուղատնտեսությունը ծայրահեղ հետամնաց վիճակում էր։ Դաշտավարությունը սիակողմանի բնույթ ուներ։ Հողատարածությունների 89 տոկոսը զբաղեցնում էին հացահատիկային կուլտուրաները՝ ունենալով շատ ցածր բերքատվություն։ Քաղաքային բնակչությունը 10 տոկոսից չէր անցնում։

Պատերազմների և դաշնակների անփառունակ տնտեսավարման պատճառով Հայաստանի էկոնոմիկան 1920 թ. հասցվեց լրիվ անկման։ Ամբողջովին քայքայվեց պղնձարդյունաբերությունը, շատ ձեռնարկություններ դադարեցին գործելուց։ Արդյունաբերական արտադրանքի ծավալը կրճատվեց 3 անգամ։ Գյուղատնտեսությունը գտնվում էր թշվառ վիճակում, նրա արտադրանքի ծավալը կրճատվեց 6 անգամ, ցանքատարածությունները՝ 76 տոկոսով և անասունների գլխաքանակը՝ 64 տոկոսով։ Համարյա դադարեց գյուղա-

տնտեսական արժեքավոր կուլտուրաների մշակումը։ Զգալիորեն կրճատվեց խաղողի, մրգերի համախառն բերքը։

Ոռոգման սիստեմի զգալի մասը ավերվել էր։ Հայաստանը դարձել էր հարյուր հազարավոր գաղթականների և որբերի երկիր։ Մոլեգնում էին համաճարակները, սովը։ Բնակչության թիվը 1 միլիոնից հասավ 720 հազարի, չնայած հարյուր հազարավոր գաղթականների հոսանքին Արևմտյան Հայաստանից։

Սովետական կարգերի հաստատումից հետո երիտասարդ սովետական հանրապետության առջև անասելի ծանր խնդիր էր դրված՝ վերացնել սովը, համաճարակները, տեղավորել գաղթականներին ու որբերին, կասեցնել ժողովրդական տնտեսության հետագա դեգրադացիան։ Այդ ծանր օրերին հայ ժողովրդին նյութական և բարոյական հսկայական օգնություն ցույց տվեցին կոմունիստական կուսակցությունը և անձամբ Վլադիմիր Իլյիչ Լենինը։ Արդեն 1920 թ. դեկտեմբերին Սովետական Ռուսաստանը, որ գտնվում էր տնտեսական ծանր վիճակում, Հայաստանին օգնեց պարենամթերքով և ոսկով։

Առաջնորդվելով Վ. Ի. Լենինի այն ցուցումով, որ նա տվել էր Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի և Լեռնականների հանրապետության կոմունիստներին ուղղված նամակում, ժողովրդական տնտեսության վերականգնումը սկսվեց նախ և առաջ գյուղատնտեսության վերականգնումով։

Ծավալվեց իռիգացիոն խոշոր շինարարություն, որի իրագործման շնորհիվ կարճ ժամանակում վերականգնվեց ջրանցքների նախկին ցանցը և կառուցվեցին նոր խոշոր ջրանցքներ, ինչպիսիք էին՝ Շիրակի, Հոկտեմբերյանի, Արտաշատի և այլ ջրանցքները։ Ոռոգվող հողերի ընդհանուր մակերեսը 1928 թ. հասավ 107 հազար հեկտարի՝ 1919 թ. 60 հազ. հեկտարի դիմաց։ 1928 թ. գյուղատնտեսական կուլտուրաների ցանքատարածության ընդհանուր մակերեսը, ինչպես նաև խաղողի ու մրգատու այգիների տարածությունը, համարյա հասավ 1913 թ. մակարդակին։

Սովետական Հայաստանի էկոնոմիկան զարգանում էր ընդհանուր տնտեսական քաղաքականությանը համապատասխան, որն ուղղված էր երկրի ինդուստրացման և էլեկտրիֆիկացիայի լենինյան հանճարեղ պլանի իրագործմանը։ Նոր հասարակարգի ամրապնդումը, հետամնացության վերացումը, Հոկտեմբերյան մեծ հեղափոխության կողմից հայտարարված վերափոխումների իրագործումը պահանջում էին համապատասխան նյութատեխնիկական բազայի ստեղծում։ Դրան կարելի էր հասնել առաջին հերթին ծանր արդյունաբերության արագ զարգացման շնորհիվ, որը հնարավորություն կտար Հայաստանը ագրարայինից վերածելու առաջավոր ինդուստրիալ երկրի։ Վերականգնման շրջանը Հայաստանում ըստ էության բնորոշվում էր ոչ միայն հնից ժառանգած ձեռնարկությունների վերականգնումով, այլև արդյունաբերության նոր ճյուղերի կազմակերպումով։

Կուսակցության գլխավոր գծի իրագործման համար նշանակալից դեր խաղացին ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանները։ Առաջին հնգամյակի սկզբում կառուցվեցին և շարք մտան մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ, արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի ծավալը հասավ 1913 թ. մակարդակին։ 1932 թ. էլեկտրաէներգիայի արտադրությունը կազմում էր 53,6 մլն կվ/ժամ, 10,5 անգամ գերազանցելով

1913 թ. մակարդակը։ Արդյունաբերական արտադրանքի ծավալը 1932 թ., 1928 թ. համեմատությամբ, աճեց 2,2 անգամ, այդ թվում արտադրանքի միջոցների արտադրանքը՝ 2,3 անգամ։

1930 թ. սկսած Հայաստանում սկսվեց համատարած կոլեկտիվացումը և միաժամանակ իրագործվեցին մեքենա-տրակտորային կայանների կազմակերպման ճանապարհով գյուղատնտեսության տեխնիկական վերազինման միջոցառումները։

1928 թ. համեմատությամբ արդյունաբերական արտադրանքի ծավալը 1937 թ. աճեց 5,2 անգամ։ Ինչպես և անցյալ տարիներին, մեծացավ էներգետիկ բազան։ Շարք մտան Կիրովականի քիմիական կոմբինատը, Ս. Մ. Կիրովի անվան քիմիական կոմբինատի կարբիդի արտադրամասը, Ալավերդու պղնձաձուլական գործարանը, Զափանի հարստացուցիչ ֆաբրիկաս, Լենինականի մանվածքի ֆաբրիկան, մսի կոմբինատը, Երևանի կաշվի և պահածոների գործարանները, մակարոն-հրուշակեղենի ֆաբրիկան, մի շարք յուղպանրագործարաններ և այլն։

1937 թ. կոլխոզներում միացել էին արդեն գյուղացի մենատնտեսների 89 տոկոսը և ցանքատարածությունների 93 տոկոսը։ Շարունակվում էր գյուղատնտեսական արտադրության տեխնիկական վերազինումը։ Հանրապետությունում գործում էր 24 ՄՏ կայան։ Գյուղատնտեսական ծանր աշխատանքը հետզհետե մեքենայացվում էր։ Շարունակվում էին կոլխոզների էլեկտրիֆիկացման աշխատանքները։ Գյուղատնտեսական արտադրանքի ընդհանուր ծավալը 1932 թ. համեմատությամբ աճեց 1,6 անգամ։

1940 թ. էլեկտրակայանների հզորությունը 47 տոկոսով գերազանցեց 1937 թ. մակարդակը, իսկ էլեկտրաէներգիայի արտադրությունը՝ 53 տոկոսով։ Հանրապետությունում զարգացավ սինթետիկ կաուչուկի արտադրությունը։ Քիմիական արդյունաբերությունը արտադրում էր կալցիումի կարբիդ, պղնձարջասպ, կալցիումի ցիանամիդ, քլորբենզոլ, կաուստիկ սոդա և այլն։ Սկսվեց խոշոր գործարանների շինարարությունը։ Արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալը 1940 թ. 8,7 անգամ գերազանցեց 1928 թ. մակարդակը, այդ թվում Ա խմբինը՝ 13,7 անգամ, Բ խմբինը՝ 6,3 անգամ։

Շարունակվում էր գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդման միջոցառումների իրագործումը։ 1940 թ. հանրապետությունում գործում էր 33 ՄՏ կայան։ Ջրովի հողատարածությունների մակերեսը հասավ 180 հազ. հեկտարի։ Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 1940 թ. 37 տոկոսով գերազանցեց 1913 թ. մակարդակը։

Սակայն սովետական մարդկանց խաղաղ աշխատանքը ընդհատվեց Հիտլերյան Գերմանիայի ուխտադրուժ հարձակումով։

Ինչպես մեր երկրի եղբայրական բոլոր ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի որդիներն ու դուստրերը ուժ և եռանդ չխնայեցին թշնամու դեմ հաղթանակն ապահովելու համար։ Հայաստանի զինվորները փառապանծ էջեր գրեցին պատերազմի տարեգրության մեջ։ Պակաս հերոսություն ցույց չտվեցին թիկունքի աշխատողները։ Արդյունաբերության աշխատանքը վերակառուցվեց պատերազմի պահանջների համաձայն։ Իրացվեց ավելի քան 300 անուն արտադրանքի արտադրությունը, այդ թվում նաև ռազմական։ Շարք մտան նոր ձեռնարկություններ և արտադրամասեր։

Չորրորդ հետպատերազմյան հնգամյակի հիմնական խնդիրն էր կարճ ժամանակում վերականգնել պատերազմի տարիներին երկրի օկուպացված շրջանների քայքայված տնտեսությունը և ապահովել ամբողջ ժողովրդական տնտեսության նոր շեշտակի վերելքը։ 1950 թ. էլեկտրաէներգիայի արտադրությունը հասավ 950 միլիոն կիլովատ-ժամի։ Նոր արդյունաբերությանը զուգահեռ զարգանում էին արդյունաբերության թեթև ճյուղերը։ Համախառն արտադրանքի ընդհանուր ծավալը աճեց 2,5 անգամ, իսկ 1928 թ. համեմատությամբ՝ 21,6 անգամ։ Համախառն արտադրանքի տարեկան միջին տեմպը 4-րդ հնգամյակում կազմեց 21,8 տոկոս, այդ թվում Ա խմբինը՝ 25,5 տոկոս, Բ խմբինը՝ 16,6 տոկոս։

1950 թ. գյուղատնտեսության համախառն արտադրանքը 1940 թ. համեմատությամբ աճեց 48,3 տոկոսով։ Ետպատերազմյան հնգամյակում ավելացավ հացահատիկի, բամբակի հումքի, շաքարի ճակնդեղի, ծխախոտի, բանջարա-բոստանային կուլտուրաների համախառն բերքը, սակայն անասնապահական մթերքների արտադրությունը զգալիորեն պակասեց։

Չինգերորդ հնգամյակում և վեցերորդ հնգամյակի 3 տարիներում արդյունաբերական արտադրանքի ծավալը մեծացավ 2,5 անգամ. արդյունաբերության կառուցվածքում տեղի ունեցան նշանակալից տեղաշարժեր։ Ավելացավ ծանր ճյուղերի տեսակարար կշիռը։

Գյուղատնտեսության մեջ կարևոր փուլ հանդիսացավ 1953 թ. կայացած ՍՄԿԿ սեպտեմբերյան պլենումից հետո ընկած ժամանակաշրջանը, երբ գյուղատնտեսական աշխատողների առջև խնդիր դրվեց ապահովել գյուղատնտեսության բոլոր բնագավառների շեշտակի վերելքը, հաղթահարել ժողովրդական տնտեսության զարգացման ընդհանուր տեմպերից ետ մնալը և լիովին բավարարել ազգաբնակչության սննդամթերքի և արդյունաբերական արտադրանքի հարատևուն պահանջները։

Սովետական Միության էկոնոմիկայի զարգացման մեջ 1959—1965 թթ. հատուկ տեղ են գրավում ՍՍՀՄ տնտեսական գլխավոր խնդրի՝ կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման տեսակետից։ Մեր հանրապետության աշխատավորները խոշոր հաջողությունների հասան ժողովրդական տնտեսության զարգացման, կուլտուրական շինարարության և ժողովրդի բարեկեցության բարձրացման գործում։ Այդ տարիներին լուծվեցին մի շարք կարևոր խնդիրներ, որոնք որոշեցին ժողովրդական տնտեսության աճի հետագա ուղին։ Արդյունաբերության ծավալը մեծացավ 2,15 անգամ, որը համապատասխանում էր արդյունաբերական արտադրանքի աճի մասին ՍՄԿԿ XXI համագումարի առաջադրանքներին։

Սուր խնդիրներից մեկն էր ժողովրդական տնտեսությունը էլեկտրաէներգիայով ապահովելը՝ Սևանա լճից ջրի բացթողումը 2,2 անգամ պակասեցնելու պայմաններում։ Այս խնդիրը կարելի կլիներ լուծել ջերմաէլեկտրակայանների կառուցումով, վառելանյութի հարցը վճռելով բնական գազ և մազութ ստանալու հանգամանքով։ Բնական գազը միաժամանակ դարձավ քիմիական արդյունաբերության զարգացման համար կարևոր հումք և լայն օգտագործում գտավ կենցաղում։

Գործի դրվեցին Աթարբեկյանի և Երևանի ԳԷՍ-երը, Երևանի և Կիրովականի ՋԷԿ-երը։ Կառուցվեցին ավելի քան 1000 կմ էլեկտրահաղորդման գծեր,

այդ թվում՝ Ադրբեջանական ՍՍՀ-ից էլեկտրաէներգիա ստանալու համար։ Սա օգնեց ապահովելու ժողովրդական տնտեսության պահանջները։ 1965 թ. էլեկտրաէներգիայի 36,6 տոկոսը ստացվեց էլեկտրակայանների Անդրկովկասյան փնջից։

Ի տարբերություն անցյալ տարիների, ոչ էներգատար արդյունաբերությունը զարգացնելու կուրս ընդունվեց։ Սկսվեց Տաթևի ԳԷՍ-ի շինարարությունը և 48 կմ թունելի շինարարությունը՝ Արփա գետի ջրերի մի մասը Սևանա լիճ տեղափոխելու համար, լճի մակերևույթը պահպանելու նպատակով։

Յոթնամյակի ընթացքում վառելանյութի պահանջն ավելացավ 2,3 անգամ. այդ պահանջարկի 45 տոկոսը բավարարվում էր բնական գազով։ Կառուցվեց Աղստաֆա—Երևան գազամուղը՝ ճյուղավորումով դեպի Լենինական, Սպիտակ, Ալավերդի, Ստեփանավան, Արարատ։ Բնական գազ ստացան 23 քաղաք և բազմաթիվ ավաններ։

Խոշոր զարգացում ապրեց գունավոր մետալուրգիան։ Արտադրանքի ծավալն ավելացավ 2,8 անգամ։ Քիմիական արդյունաբերության արտադրանքի ծավալը ավելացավ 3,1 անգամ։ Նարբ են մտել Կիրովականի ացետատային մետաբսի, Երևանի քիմիական ռեակտիվների գործարանները, զգալիորեն մեծացված է ավտոդղերի, պոլիվինիլացետատի և այլ ձեռնարկությունների հզորությունը։ Մեքենաշինությունը դարձավ առաջատար բնագավառներից մեկը և ձեռք բերեց բազմաճյուղային բնույթ։ Զարգացան նոր բնագավառներ՝ սարքաշինությունը, ռադիոարդյունաբերությունը, էլեկտրաարդյունաբերությունը, ճանտպարհաշինական և կոմունալ մեքենաշինությունը։ Կառուցվեցին և գործի դրվեցին մոտ չորս տասնյակ նոր ձեռնարկություններ։ Հանրապետության փոքր քաղաքներում և շրջաններում կազմակերպվեցին արդյունաբերական ձեռնարկություններ։

Ծանր արդյունաբերության ճյուղերի հետ մեկտեղ զարգացան նաև ժողովրդական լայն սպառման ապրանքներ արտադրող ճյուղերը։ Զգալիորեն ավելացավ ամեն տեսակի կտորեղենի արտադրությունը։

XXIII Համագումարի դիրեկտիվները ութերորդ հնգամյակի կապակցությամբ, որպես էկոնոմիկայի գլխավոր խնդիր, նախատեսում էին գիտության և տեխնիկայի նվաճումների բազմակողմանի օգտագործման, հասարակական ողջ արտադրության ինդուստրիալ զարգացման, արտադրության էֆեկտիվության և աշխատանքի արտադրողականության բարձրացման հիման վրա ապահովել արդյունաբերության զգալի աճը, գյուղատնտեսության զարգացման բարձր կայուն տեմպեր և, դրանց շնորհիվ, հասնել ժողովրդի կենսամակարդակի էական վերելքի՝ սովետական բոլոր մարդկանց նյութական և կուլտուրական պահանջները լրիվ բավարարելու համար։

XXIII Համագումարի դիրեկտիվներով արդյունաբերության աճը նախատեսվում էր 1,5 անգամ, իսկ Հայկական ՍՍՀ-ում առաջանցիկ աճը մոտ 1,8 անգամ։

Տնտեսական կարևոր ցուցանիշների գծով ութերորդ հնգամյակի խնդիրները հաջողությամբ կատարվել են։ Արդյունաբերական արտադրանքը ավելացել է ավելի քան 1,75 անգամ, այսինքն՝ մոտ 1,8 անգամ, ինչպես նախատեսված էր դիրեկտիվներում։

Ազգային եկամուտը ավելացել է 1,5 անգամ։ Արդյունաբերական արտադրանքի և ազգային եկամտի աճի տեմպերը ավելի բարձր են, քան նախորդ հնգամյակում և ավելի բարձր՝ քան միջմիութենական ցուցանիշները։ Դա երևում է ստորև բերված տվյալներից.

	ՍՍՀՄ	Հայկական ՍՍՀ
Ազգային եկամուտը	1,4 անգամ	1,53 անգամ
Արդյունաբերական արտադրության ծավալը	1,5 »	մոտ 1,8 »
Էլեկտրաէներգետիկա	1,54 »	2,1 »
Մեքենաշինություն և մետաղամշակում	1,74 »	2,1 »
Քիմիական և նավթաքիմիական արդյունաբերություն .	1,72 »	1,57 »

Ժողովրդական սպառման ապրանքների միջին տարեկան տեմպի աճը.

	ՍՍՀՄ	Հայկական ՍՍՀ
1966—1970 թթ. ընթացքում	8,3 %	12,5 %
1961—1965 թթ. »	6,3 %	7,1 %
Արտադրության հիմնական ֆոնդեր	1,5 անգամ	1,6 անգամ
Նախորդ հնգամյակի համեմատությամբ հնգամյակի կապիտալ ներդրումների ծավալի աճը	1,4	1,57
1961—1965 թթ. դիմաց գյուղատնտեսական մթերքների համախառն արտադրանքի միջին տարեկան ծավալը ավելացել է	21 %	19,8 %
Խնակչության իրական եկամուտները	33 %	37—38 %
Նախատեսվածի համեմատ	30 %	մոտ 1,4 անգամ
Ապրանքաշրջանառության ծավալը	1,5 անգամ	1,7 »

Ութերորդ հնգամյակի ընթացքում շարք մտան մոտ 110 նոր ձեռնարկություններ և խոշոր արտադրամասեր։ Դրանց թվում են՝ Երևանի և Հրազդանի ՋԷԿ-երը, Հրազդանի լեռնաքիմիական կոմբինատի ցեմենտի արտադրամասը, քիմիական ռեակտիվների, վիտամինային պրեպարատների գործարանները, ռադիոյի և էլեկտրոնային արդյունաբերության մի շարք ձեռնարկություններ և շատ ուրիշներ։

Հնգամյա պլանների իրագործման շնորհիվ Հայաստանը ցարական Ռուսաստանի հետամնաց ագրարային ծայրամասից վերածվեց ինդուստրիալ հանրապետության՝ բազմաճյուղ արդյունաբերությամբ և բարձր մեքենայացված գյուղատնտեսությամբ։ Այժմ Հայաստանում կան 664 արդյունաբերական ձեռնարկություններ, դրանցից են՝ 77 մեքենաշինական, 11 քիմիական, 7 գունավոր մետալուրգիայի, 122 թեթև արդյունաբերության, 140 սննդի, 40 թղթի և փայտամշակման, 81 շինանյութերի, 90 տեղական արդյունաբերության և այլն։

Հանրապետությունում աշխատում են այնպիսի խոշոր գործարաններ, ինչպիսիք են՝ Կիրովի անվան կոմբինատը, Կիրովականի քիմկոմբինատը և քիմիական մանրաթելի գործարանը, պոլիվինիլացետատը, Հայէլեկտրագործարանը, Երևանի կաբելի, էլեկտրատեխնիկական, Ձերժինսկու անվան գազգա-

հաշինական Զարենցավանի ներտաշ հաստոցների և գործիքաշինական, Լենինականի հղկիչ հաստոցների, Երևանի ճշգրիտ էլեկտրասարքերի, ռադիո և էլեկտրոնային արդյունաբերության գործարանները, Արարատի ցեմենտի-շիֆերի կոմբինատը, Քաջարանի պղնձամոլիբդենային, Ալավերդու պղնձա-քիմիական կոմբինատները, Լենինականի և Երևանի մսի կոմբինատները և հարյուրավոր այլ խոշոր, միջին ու մանր ձեռնարկություններ։

Հանրապետությունը տալիս է արտադրանքի այնպիսի տեսակներ, ինչպիսիք են՝ հաշվիչ-էլեկտրոնային մեքենաները, ռադիոսարքերը, էլեկտրոնային արդյունաբերության արտադրանքը, էլեկտրական մեքենաները՝ սկսած ամենափոքրերից մինչև խոշոր բարձրավոլտները, էլեկտրական սարքերը, կաբելային արտադրանքը, էլեկտրական լամպերը և լուսատեխնիկական սարքերը, մետաղահատ հաստոցների և հատիչ գործիքների բազմազան տեսակները, չափիչ սարքերը, ժամացույցները, օդային կոմպրեսորները, հիդրավլիկ պոմպերը, պղինձը, ալյումինը, մոլիբդենային արտադրանքը, սինթետիկ կաուչուկը, պլաստմասսաները, արհեստական մանրաթելերը, հանքային պարարտանյութերը, քիմիական ռեակտիվները, կենցաղային քիմիայի ապրանքները, լաքերն ու ներկերը, վիտամինները, դեղանյութերը, ցեմենտը, ասբոցեմենտները, կերամիկական խողովակները և երեսապատման սալիկները, բամբակե, բրդե և մետաքսե գործվածքները, տրիկոտաժեղենը, կոշկեղենը, հախճապակե և ճենապակե ապրանքները, բյուրեղապակին և տեսակավոր ամանեղենը, էմալապատ ամանեղենը, գինիները ու կոնյակները, պահածոները, հրուշակեղենը և սպառման այլ ապրանքներ։ Արտադրությունն անընդհատ կատարելագործվում է։ Մեկ հոդվածի մեջ դժվար է ցույց տալ, թե արտադրության որ ճյուղն ինչպես է կատարելագործվել, ուստի կաշխատենք արտադրության կարևորագույն ճյուղերից մեկի՝ հաստոցաշինական արդյունաբերության օրինակով ցույց տալ, թե ինչպիսի տեղաշարժեր են կատարվել հաստոցա-գործիքաշինական արդյունաբերության մեջ։ Արդյունաբերության այս ճյուղն ունի 15 գործարան։ 1966—1970 թթ. ընթացքում դրանց արտադրանքն աճել է ավելի քան երկու անգամ (234,9 տոկոսով)։ Կերճշգրիտ հաստոցների տեսակարար կշիռը մետաղահատ հաստոցների ընդհանուր արտադրանքի մեջ 1970 թ. հասել է 38 տոկոսի, իսկ ծրագրային կառավարումով հաստոցների արտադրությունը վերջին երեք տարիների ընթացքում եռապատկվել է։ Մետաղամշակման արդյունաբերության համար գործիքների արտադրությունը անցած հրնգամյակի ընթացքում աճել է ավելի քան 5 անգամ, 1100 մարդուց ավելի աշխատող ունեցող ձեռնարկությունների տեսակարար կշիռը 1970 թ. կազմել է 20,1 տոկոս՝ 1965 թ. 7,2 տոկոսի դիմաց, իսկ 300-ից մինչև 700 աշխատող ունեցող ձեռնարկությունների թիվը կազմում է 71,4 տոկոս։

Հնգամյակի ընթացքում արդյունաբերական-արտադրական ֆոնդերն աճել են 44,6 տոկոսով, իսկ արտադրությունը՝ 134 տոկոսով։ Արտադրական ֆոնդերի կեսից ավելին (54,6 տոկոսը) կազմում է ակտիվ մասը, հիմնական ֆոնդերի 44,6 տոկոս աճի պայմաններում ակտիվ մասը (մեքենաներ, սարքավորումներ, գործիքներ և այլն) աճել է 71,3 տոկոսով։ Արտադրության մեջ նոր տեխնիկա ներդնելու, կոմպլեքսային-մեքենայացված և հոսքային գծերի կազմակերպման հետևանքով հիմնական արտադրական ֆոնդերի կառուցվածքը զգալիորեն բարելավվել է։ Եթե 1965 թ. հիմնական ֆոնդերի 1 ռուբլու գիմաց բաց էր թողնվում 0,75 ռուբլու արտադրանք, ապա 1970 թ.՝ 1,24 ռուբլու ար-

տադրանք։ Միայն 1970 թ. ընթացքում հասատցադործիքաշինական արդյունաբերությունը յուրացրել է արդյունաբերական արտադրանքի 23 նոր տեսակ։

Անցած հինգ տարիների ընթացքում, տեխնոլոգիական պրոցեսների կատարելագործման շնորհիվ, աշխատանքի արտադրողականությունը նշված ճյուղում բարձրացել է 94 տոկոսով, այսինքն՝ գրեթե կրկնապատկվել է։ Չարենցավանի գործիքաշինական գործարանում աշխատանքի արտադրողականությունը ավելացել է 5 անգամ։

Նույնպիսի տեղաշարժեր են կատարվել նաև արդյունաբերության մյուս ճյուղերում՝ էլեկտրատեխնիկական, քիմիական մեքենաշինության, սարքաշինության, ռադիո և էլեկտրոնային արդյունաբերության և այլն։

Հայաստանի արդյունաբերության արտադրանքը ուղարկվում է երկրի բոլոր տնտեսական շրջանները, արտահանվում շատ արտասահմանյան երկրներ՝ թե՛ ժողովրդա-դեմոկրատական, թե՛ զարգացող, և թե՛ կապիտալիստական։

Այսպիսով, կուսակցության ազգային և տնտեսական քաղաքականության իրագործման շնորհիվ մեր հանրապետությունը ցարական Ռուսաստանի ագրարային ծայրամասից վերածվեց արդյունաբերական հանրապետության, որը ոչ միայն Միության մյուս հանրապետություններին, այլև արտասահմանյան երկրներին արդյունաբերական արտադրանք, մեքենաներ, սարքավորումներ, պղնձի և ալյումինի գլանվածք, քիմիական արտադրանք, սպառման ապրանքներ մատակարարելու մեծ հնարավորություններ ունի։

Երկիրը թևակոխել է կոմունիստական շինարարության նոր բնագիծը՝ իններորդ հնգամյակը։

ՍՄԿԿ XXIV համագումարը ընդունեց 1971—1975 թթ. իններորդ հնգամյակի դիրեկտիվները։ Համագումարը կրկին ցույց տվեց, թե մեր կուսակցությունը ինչպիսի մեծ նշանակություն է տալիս սոցիալիստական էկոնոմիկայի զարգացմանը, կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծմանը։

«Կուսակցության ու սովետական պետության համար, ինչպես որ կանխատեսում էր Լենինը,— ասել է ընկ. Լ. Ի. Բրեժնևը կուսակցության XXIV համագումարում,— էկոնոմիկան գլխավոր քաղաքականությունն է, մի քաղաքականություն, որի հաջողություններից վճռական չափով կախված է սովետական հասարակության առաջընթաց շարժումը դեպի կոմունիզմ և մեր սոցիալիստական տերության միջազգային դիրքերի ամրապնդումը»։

Կուսակցությունը, սովետական ժողովուրդը իրավացիորեն հպարտանում են, որ իրենց հիմնական ջանքերը կենտրոնացնելով կոմունիզմի համար մղվող պայքարի հիմնական պլացդարմում, անցած հնգամյակում տնտեսական և կուլտուրական շինարարության բոլոր բնագավառներում նոր բնագծեր են նվաճել։

Ինչպես նշեց ՍՄԿԿ XXIV համագումարը, սովետական ժողովուրդը, իրագործելով կուսակցության XXIII համագումարի որոշումները, կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման ասպարեզում նոր հաղթանակների հասավ։ Խոշոր հաջողություններ են ձեռք բերվել ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում, սոցիալական խնդիրների լուծման, սովետական մարդկանց նյութական և կուլտուրական կենսամակարդակի բարձրացման ասպարեզներում։ Ամրապնդվել է սովետական հասարակության բարոյա-քաղաքական

միասնություններ, իր հետագա զարգացումն է ապրել սոցիալիստական դեմոկրատիան։ Աճել է մեր հայրենիքի միջազգային հեղինակությունը։ Մեծացել է Սովետական Միության պաշտպանական հզորությունը։

Նոր, իններորդ հնգամյակը կարևորագույն փուլ կդառնա դեպի կոմունիզմ սովետական հասարակության հետագա առաջընթացի ճանապարհին։ Հնգամյակի գլխավոր խնդիրը, ինչպես բնորոշել է ՍՄԿԿ XXIV համագումարը, ժողովրդի նյութական և կուլտուրական կենսամակարդակի նշանակալի բարձրացումն է՝ սոցիալիստական արտադրության զարգացման արագ տեմպերի, նրա էֆեկտիվության բարձրացման, գիտատեխնիկական առաջընթացի և աշխատանքի արտադրողականության աճի արագացման հիման վրա։

Համագումարի ընդունած որոշումները համապատասխանում են կուսակցության, ողջ ժողովրդի կենսական շահերին, արժանանում նրանց ջերմ, միահամուռ հավանությանը։ Ներթափանցված լինելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով, այդ որոշումները գոհունակությամբ ընդունվեցին միջազգային կոմունիստական շարժման կողմից։

ՍՄԿԿ XXIV համագումարի որոշումներն ընդգրկում են քաղաքականության, էկոնոմիկայի, սովետական հասարակության սոցիալ-քաղաքական զարգացման, կուսակցության կազմակերպչական և գաղափարական-տեսական գործունեության։ բոլոր կարևորագույն խնդիրները, որոնք առաջադրված են բուն կյանքի, կոմունիստական շինարարության ներկա փուլի կողմից։

Դիրեկտիվներով նախատեսվում է.

— Հնգամյակի ընթացքում ազգային եկամուտը ավելացնել 37—40 տոկոսով, ըստ որում աճի ոչ պակաս քան 80 տոկոսը ստանալ աշխատանքի արտադրողականության աճի հաշվին։

— Ավարտել անցումը պարտադիր միջնակարգ կրթության, անհրաժեշտ միջոցառումներ իրագործել բարձրորակ մասնագետների ու բանվորների պատրաստման և կադրերի վերապատրաստման ուղղությամբ՝ կապված նոր տեխնիկայի ներդրման և արտադրության կազմակերպման բարելավման հետ։

— Բնակչության յուրաքանչյուր շնչին ընկնող իրական եկամուտները ավելացնել 30 տոկոսով, ի նկատի ունենալով, որ բնակչության եկամուտների աճի հիմնական աղբյուրը, ինչպես և նախկինում, պետք է լինի վարձատրությունն ըստ աշխատանքի։

— Նախատեսել նվազագույն աշխատավարձի հետագա բարձրացումը։

— Արագացնել գիտատեխնիկական առաջընթացի տեմպերը և ապահովել միասնական տեխնիկական քաղաքականության իրագործումը։

Գյուղատնտեսության բնագավառում հիմնական խնդիրն է՝ գյուղատնտեսական մթերքների տարեկան միջին արտադրանքը, նախորդ հնգամյակի համեմատությամբ, ավելացնել 20—22 տոկոսով, առավել լիովին բավարարելով բնակչությանը՝ սննդամթերքով, իսկ արդյունաբերությանը՝ հումքով։

Ժողովրդի կենսամակարդակի բարձրացման ասպարեզում նախատեսվում է.

— Կատարելագործել աշխատանքի վարձատրումը ըստ քանակի և որակի։ Բանվորների և ծառայողների միջին աշխատավարձը բարձրացնել 20—22 տոկոսով, կոլտնտեսականների աշխատանքի վարձատրությունը՝ միջին հաշվով 30—35 տոկոսով։

— Ապահովել սպառման հասարակական ֆոնդերի՝ որպես ժողովրդի նյութական և կուլտուրական կենսամակարդակի բարձրացման կարևոր աղբյուրի հետագա զարգացումը։ Հնգամյակի ընթացքում մեծացնել անվճար նյութական բարիքների և ծառայությունների ծավալը, ինչպես նաև այդ ֆոնդերից բնակչության տրվող դրամական վճարումները ավելացնել 40 տոկոսով։

— Ցինանավորման բոլոր աղբյուրների հաշվին հնգամյակի ընթացքում կառուցել 565—575 միլիոն քառակուսի մետր բնակելի տարածություն։

— Բուհերի ուսանողների և միջնակարգ մասնագիտական հաստատություններում սովորողների համար հանրակացարանների շինարարությունը ընդլայնել ի հաշիվ պետական միջոցների։

Արտադրողական ուժերի տեղաբաշխման և միութենական հանրապետությունների տնտեսության զարգացման ուղղությամբ պետք է ապահովել արտադրողական ուժերի տեղաբաշխման հետագա բարելավումը, կատարելագործել տերիտորիալ տնտեսական կապերը։ Բարձրացնել միութենական հանրապետությունների և աշխատավորների դեպուտատների տեղական սովետների դերը արտադրողական ուժերի տեղաբաշխման հարցերը լուծելու գործում։

Ըստ դիրեկտիվների նախատեսվում է Հայկական ՍՍՀ արդյունաբերական արտադրանքի ծավալը ավելացնել 60—63 տոկոսով։ Ապահովել գունավոր մետալուրգիայի, մեքենաշինության ոչ մետաղատար արտադրությունների, թեթև և սննդի արդյունաբերության հետագա զարգացումը։ Էլեկտրաէներգիայի արտադրությունը ավելացնել 1,7 անգամ, պղնձինը՝ 1,3, սարքերինը և ավտոմատացման միջոցներինը՝ 1,9, ցեմենտինը՝ 2,6, մրգի և բանջարեղենի պահածոներինը՝ 1,6, գործվածքեղենինը և տրիկոտաժեղենինը՝ 1,3, կոշկեղենինը՝ 1,2, սառնարաններինը՝ 2,5 և կահույքինը՝ 1,9 անգամ. ընդլայնել կուլտուր-կենցաղային և տնտեսական ապրանքների արտադրությունը։ Նախատեսված է գործի դնել Ջոդի ոսկու կոմբինատը, Հրազդանի լեռնաքիմիական կոմբինատի կավահողի և քիմիական զանազան նյութերի արտադրության հզորությունները։ Ծավալել ատոմային էլեկտրակայանի շինարարությունը, գործի դնելով առաջին բլոկը. Հրազդանի էլեկտրակայանում շարք մտցնել լրացուցիչ հզորություններ. շարունակել հիդրոէլեկտրակայանների կասկադի շինարարությունը Որոտան գետի վրա։ Մեծացնել հանքային պարարտանյութերի, սինթետիկ խեժերի և պլաստմասսաների արտադրության հզորությունները։

Պլանով նախատեսվում է ապահովել խաղողի, մրգերի, բանջարեղենի, ծխախոտի, եթերայուղատու բույսերի, անասնապահական մթերքների արտադրության ավելացումը, շահագործման հանձնել 50 հազ. հեկտար ոռոգելի հողեր. ջրարբիացնել 130 հազ. հեկտար արոտավայր։

Իններորդ հնգամյակի ընթացքում Հայկական ՍՍՀ-ում պահպանվում են ազգային եկամտի, բնակչության իրական եկամուտների աճի արագ տեմպերը։ Նախորդ հնգամյակից ավելի արագ տեմպերով են աճելու գյուղատնտեսական ապրանքների համախառն արտադրանքը, մանրածախ ապրանքաշրջանառությունը, հասարակական տրանսպորտը, կենցաղային սպասարկումը և բնակարանային շինարարությունը։

Ընթացիկ հնգամյակում հետագա զարգացում կապրեն մեր հանրապետության ժողովրդական տնտեսության տեխնիկական առաջընթացն ապահովող ճյուղերը։ Դա որոշակի երևում է հետևյալ աղյուսակից։

Արդյունաբերության ճյուղեր	ՍՍՀՄ	Հայկական ՍՍՀ
Էլեկտրաէներգետիկա	1,39—1,45 անգամ	1,8 անգամ
Դուռնավոր մետալուրգիա	1,4 »	1,54 »
Մեքենաշինություն և մետաղամշակություն	1,7 »	մոտ 2 »
Ցարբաշինություն	2,0 »	1,9 »
Հաշվիչ-էլեկտրոնային տեխնիկայի արտադրություն	2,4 »	4,3 »
Կահույքի արտադրություն	1,6 »	1,9 »
Ցեմենտի արտադրություն	1,28—1,35 »	2,6 »
Թեթև արդյունաբերություն	1,35—1,4 »	1,5 »
Սննդի արդյունաբերություն	1,33—1,35 »	1,4 »
Կուլտուր-կենցաղային օգտագործման և տնտեսական ապրանքների արտադրություն	1,8 »	2,1 »
Տեղական արդյունաբերություն	1,7 »	2,2 »

Առաջանցիկ աճը, ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ ընթացիկ հրնգամյակում, պայմանավորված է աշխատանքային ռեսուրսների՝ միջին միութենականից մոտավորապես երկու անգամ բարձր տեմպերով, որոնք հետևանք են բնակչության ավելի բարձր բնական, ինչպես նաև մեխանիկական աճի, ի հաշիվ միջհանրապետական միգրացիայի և հայրենադարձության։

Ընթացիկ հնգամյակում հանրապետության աշխատանքային ռեսուրսների աճը կկազմի շուրջ 300 հազ. (294 հազ.) մարդ, մյուս կողմից, հանրապետության հողատարածությունների սահմանափակությունը և ռելեֆը հնարավորություն չեն ընձեռում գյուղատնտեսությունը ընդլայնված զարգացնելու և լրացուցիչ աշխատանքային ռեսուրսներ զբաղեցնելու։ Գյուղատնտեսության մեքենայացման հետևանքով կազատվեն աշխատանքային ռեսուրսներ, որոնք կարող են ներգրավվել արդյունաբերության մեջ։ Այս նպատակով, ինչպես անցած տարիներին, այնպես էլ այս հնգամյակի ընթացքում, փոքր քաղաքներում, շրջկենտրոններում և գյուղական վայրերում կստեղծվեն արդյունաբերական ձեռնարկություններ և առանձին խոշոր ձեռնարկությունների բաժանմունքներ ու արտադրամասեր։ Անցած հնգամյակի ընթացքում այս միջոցառումը զգալիորեն կրճատեց գյուղական բնակչության տեղաշարժը դեպի խոշոր քաղաքները՝ Երևան, Լենինական և Կիրովական, մեծ քաղաքների արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը 79 տոկոսից իջավ 72 տոկոսի, թեև այդ քաղաքներում ևս արդյունաբերությունը զարգանում էր արագ տեմպերով։

Մի շարք շրջաններում, ուր մինչև 1960 թ. բնակչությունը քիչ էր աճում, վերջին 11 տարիների ընթացքում, մարդահամարների միջև ընկած ժամանակաշրջանում, բնակչության թիվը շեշտակիորեն ավելացել է և զգալիորեն նվազել է տեղաշարժը դեպի մեծ քաղաքները։

Ընթացիկ հնգամյակում սպառման առարկաների արտադրությունը կավելանա 1,68 անգամ՝ արտադրության միջոցների արտադրության 1,64 անգամ աճի դիմաց։

Արտադրության ընդհանուր աճին զուգընթաց համապատասխանաբար զարգանալու են և նրա առանձին ճյուղերը։ Այսպես, էլեկտրաէներգիայի արտադրությունը 1975 թ. կհասնի 11 միլիարդ կիլովատ-ժամի, էլեկտրակայաններում շահագործման կհանձնվի 1836 հազ. կիլովատ գեներացնող հզորու-

թյուն, որը ավելի է, քան էներգասիստեմի ողջ հզորությունը 1970 թ.։ Տունավոր մետալուրգիայի զարգացման համար հատկացվում են շուրջ 320 միլիոն ռուբլու կապիտալ ներդրումներ։ Քիմիական արդյունաբերությունը նոր հընգամյակում կաճի 46 տոկոսով։ Կկազմակերպվեն կաուչուկի, ռետինա-տեխնիկական իրերի նոր արտադրություններ ժամանակակից տեխնիկայի հիման վրա. դա հնարավորություն կտա զգալիորեն թեթևացնել աշխատանքի պայմանները։

Ինչպես հնգամյակում նախատեսվում է տեխնիկապես վերակառուցել և զգալիորեն ընդարձակել մեքենաշինական արտադրությունը, շեշտակիորեն բարձրացնել այդ ճյուղի արտադրանքի որակը։ Կկառուցվեն սարքաշինական, ռադիոարդյունաբերության, հաստոցա-գործիքաշինական և այլ նոր գործարաններ։ Կշարունակվի ռադիո և էլեկտրոնային արդյունաբերության ձեռնարկությունների տեղաբաշխումը շրջկենտրոններում և խոշոր գյուղերում։ Արագացված տեմպերով է զարգանալու շինանյութերի արդյունաբերությունը, արտադրանքի ծավալը կավելանա 1,42 անգամ։

Հնգամյակի ընթացքում կզարգանան նաև թեթև և սննդի արդյունաբերությունը։ Կկառուցվեն թեթև, սննդի և փայտամշակման արդյունաբերության 34 նոր ձեռնարկություններ։

ՍՄԿԿ XXIV համագումարի և ՍՄԿԿ Կենտկոմի հուլիսյան (1970 թ.) պլենումի որոշումներին համապատասխան նախատեսվում է զգալիորեն ավելացնել գյուղատնտեսական ապրանքների արտադրությունը։ Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը 1975 թ. կավելանա 38 տոկոսով։ Կկառուցվեն մսի կաթի վերամշակման արդյունաբերական կոմպլեքսներ, թռչնաբուծական ֆերմաներ։ Այս ամենի շնորհիվ անասնապահական մթերքները կավելանան 53,9 տոկոսով։ Գյուղատնտեսության զարգացման նպատակով կապիտալ ներդրումները 1966—1970 թթ. համեմատությամբ կավելանան 74 տոկոսով։ Զգալիորեն ավելի են լինելու գյուղատնտեսական տեխնիկան, հանքային պարարտանյութերը։

Ընթացիկ հնգամյակում նախատեսվում է կառուցել ավելի շատ բնակարաններ, դպրոցներ, մանկապարտեզներ, հիվանդանոցներ։ Կշինվեն 200 կիլոմետր նոր ավտոմոբիլային ճանապարհներ, կսկսվի Հրազդան—Ջևան ճանապարհի շինարարությունը և, այսպիսով, հաջորդ հնգամյակում կավարտվի Երևան—Աղստաֆա մայրուղին։ Էականորեն բարելավվելու է քաղաքների և գյուղերի կոմունալ-կենցաղային տնտեսությունը։

Մեկ հոդվածի սահմաններում դժվար է բազմակողմանիորեն անդրադառնալ բոլոր այն վիթխարի խնդիրներին, որոնք դրված են մեր հանրապետության ժողովրդական տնտեսության առաջ 1971—1975 թթ. IX հնգամյակում։ Այս հնգամյակը կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման մի նոր փուլն է, և մեր հանրապետության աշխատավորների պատվի գործն է իրենց արժանի ներդրումն անել, իրականացնելով ՍՄԿԿ XXIV համագումարի պատմական որոշումները։